Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի ..... թվականի
..... N ..... -Ն հրամանի

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են երիտասարդական աշխատողի որակավորման չափանիշները (այսուհետ՝ Չափանիշներ)՝ ամրագրելով երիտասարդական աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ կարողությունների շրջանակը:

2. Երիտասարդական աշխատողի որակավորման չափանիշներին երիտասարդական աշխատողի կարողունակությունների (գիտելիքների, հմտությունների, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների) համապատասխանությունը փաստվում է հավաստագրման գործընթացի միջոցով:

3. Չափանիշների սահմանման նպատակն Է՝ ապահովել երիտասարդական աշխատանքի որակը և արդյունավետությունը, նպաստել երիտասարդական աշխատողի մասնագիտական ինքնության ձևավորմանը և հանրային ճանաչմանը, հիմքեր ստեղծել երիտասարդական աշխատողների շարունակական մասնագիտական զարգացման, վերապատրաստման և հավաստագրման համար:

4. Երիտասարդական աշխատողի կարողունակությունների կառուցվածքը սահմանվում է հիմնված երիտասարդական աշխատողի ընդհանուր և հատուկ գործառույթների վրա, որոնք ձևավորվում են «գործառույթ - կարողունակություն - համապատասխան գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեք» փոխկապակցված համակարգի սկզբունքով:

5. Ելնելով վերոնշյալ տրամաբանությունից՝ առանձնացվում են երիտասարդական աշխատողի որակավորման չորս հիմնական գործառութային ոլորտներ և դրանց իրականացման համար անհրաժեշտ վաթսունչորս ունակություններ կամ կարողություններ:

6. Չափանիշները հիմք են երիտասարդական աշխատողի հիմնական գործառույթների արդյունավետ իրականացման համար՝ անկախ երիտասարդական աշխատանքի իրականացման միջավայրից և ձևաչափից:

7. Երիտասարդական աշխատողի որակավորումը երիտասարդական աշխատողի կողմից համապատասխան կրթության, ուսուցման, մասնագիտական փորձի կամ դրանց համակցությամբ ձեռք բերված կարողունակությունների ամբողջությունն է, որը հավաստում է նրա պատրաստվածությունը սահմանված գործառույթների իրականացման համար:

II. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

8. Սույն հավելվածով սահմանվում են երիտասարդական աշխատողի որակաորման չափանիշները, որոնք հանդիսանում են երիտասարդական աշխատանքի գործունեության համար անհրաժեշտ կարողունակությունների համակարգված

ամբողջություն և ներկայացված է Ձև 1-ում: Այն ներառում է վաթսունչորս հիմնական կարողություններ, որոնք անհրաժեշտ են բարձրորակ, արդյունավետ և պատասխանատու երիտասարդական աշխատանք իրականացնելու համար՝ անհատական, խմբային, համայնքային և պետական քաղաքականության մակարդակներում:

9. Երիտասարդական աշխատողի որակավորման չափանիշները խմբավորված են հետևյալ չորս գործառութային ոլորտներում՝

Չափանիշ 1 Անձնական և մասնագիտական զարգացում, ներառյալ՝

ա) ինքնագիտակցություն և մասնագիտական ինքնարտացոլում,
բ) մասնագիտական էթիկայի պահպանում,
գ) մասնագիտական բարեկեցության ապահովում:

2) Չափանիշ 2 Երիտասարդների հետ անմիջական աշխատանք, ներառյալ՝

ա) երիտասարդների հետ վստահելի հարաբերությունների կառուցում,
բ) անհատական և խմբային աջակցություն,
գ) կրթական գործընթացներ և զարգացում,
դ) արժեքներ և ինքնություն,
ե) թվային գործիքներ և արհեստական բանականություն
զ) առողջ ապրելակերպ և երիտասարդների առողջություն
է) ձեռնարկատիրություն և մասնագիտական կողմնորոշում
ը) միջմշակութային հաղորդակցություն և զգայունություն:

3) Չափանիշ 3 Կազմակերպչական և ծրագրային կառավարում, ներառյալ՝

ա) ծրագրային աշխատանք,
բ) ռեսուրսների կառավարում,
գ) թիմային աշխատանք և կազմակերպություն:

4) Չափանիշ 4 Աշխատանք համայնքի և հասարակության հետ, ներառյալ՝

ա) Համայնք և շահակիցներ,
բ) քաղաքացիական և քաղաքական մասնակցություն,
գ) միջսեկտորալ համագործակցություն,
դ) հետազոտություն և զարգացում,
ե) միջազգային և գլոբալ չափումներ:

10. Սույն չափանիշները հիմք են հանդիսանում երիտասարդական աշխատողների վերապատրաստման, հավաստագրման և որակի ապահովման համակարգերի մշակման և իրականացման համար:

11. Երիտասարդական աշխատողի որակաորման չափանիշները նախատեսված են որպես գործիք, որը կօգնի բացահայտել, զարգացնել և գնահատել երիտասարդների հետ աշխատող մասնագետների կարողունակությունները: Այս շրջանակը կարող է կիրառվել տարբեր համատեքստերում՝ անհատական ինքնագնահատման, կրթական ծրագրերի մշակման, թիմային աշխատանքի և ոլորտի զարգացման նպատակներով: Այն հիմնված է երիտասարդական աշխատանքի առանցքային ոլորտների վրա և կարող է տեղայնացվել կամ լրացվել տարբեր կարիքների և ծրագրերի համապատասխան:

12. **Պետական լիազոր մարմինների համար** այս շրջանակը կարող է ծառայել որպես հիմք երիտասարդական աշխատողների վերապատրաստման, որակավորման և

որակի գնահատման գործընթացները կազմակերպելու համար: Պետական մարմինները կարող են ինտեգրել այս կարողունակությունները ազգային ստանդարտներում և քաղաքականություններում, մշակել հավաստագրման համակարգեր, դասընթացների ծրագրեր և գնահատման գործիքներ՝ ապահովելով ոլորտի մասնագետների շարունակական և որակյալ զարգացումը: Օրինակ՝ շրջանակը կարելի է կիրառել որպես ուղեցույց պետական վերապատրաստման ծրագրերի բովանդակությունը սահմանելու համար, որտեղ յուրաքանչյուր կարողություն կդառնա առանձին մոդուլ կամ գնահատման չափորոշիչ՝ համապատասխանեցված ազգային առաջնահերթություններին և կարիքներին:

13. **Դասընթացավարների և ուսուցանողների համար** այս շրջանակը կարող է օգտագործվել երիտասարդական աշխատանքի կրթական ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում: Դասընթացավարները կարող են հիմնվել այս կարողունակությունների վրա՝ ստեղծելով առաջադրանքներ, վարժություններ և գործնական նախագծեր, որոնք կօգնեն երիտասարդական աշխատողներին զարգացնել իրենց հմտությունները: Օրինակ՝ շրջանակը կարող է օգտագործվել որպես հիմք դասընթացների կառուցվածքի համար, որտեղ յուրաքանչյուր կարողություն կքննարկվի առանձին կամ խմբային աշխատանքներով, և ամեն կարողության համար սահմանված գիտելիքներ, հմտություններ և մոտեցումներ բացվածքը կօգնի ընտրելու ուսուցանման և գնահատման առավել արդյունավետ մեթոդներ:

14. **Երիտասարդական աշխատողների** համար այս շրջանակը կարող է ծառայել որպես ինքնագնահատման գործիք, որը կօգնի բացահայտել սեփական ուժեղ և թույլ կողմերը: Երիտասարդական աշխատողները կարող են օգտագործել այն իրենց մասնագիտական զարգացման պլանավորման համար, սահմանելով անձնական նպատակներ և հետևելով առաջընթացին: Օրինակ՝ կարելի է գնահատել սեփական կարողունակությունները որևէ սանդղակով (օրինակ՝ 1-ից 5 միավոր) և մշակել գործողությունների պլան՝ թույլ կողմերը բարելավելու համար: Երիտասարդական աշխատողի ինքնագնահատման գործիքը սահմանված է Ձև 2-ում:

15. **Երիտասարդական կազմակերպությունների և հաստատությունների համար** շրջանակը կարող է ինտեգրվել կազմակերպության ներքին գործընթացներում՝ թիմի անդամների ընտրության, վերապատրաստման և գնահատման համար: Այն կօգնի ստեղծել ստանդարտներ երիտասարդական աշխատանքի որակի ապահովման համար, ինչպես նաև կխթանի թիմային քննարկումներ կարողությունների շուրջ: Օրինակ՝ կազմակերպությունը կարող է օգտագործել շրջանակը որպես հիմք աշխատակիցների մասնագիտական զարգացման ծրագրերի համար:

16. **Գործընկերների և շահառուների հետ համագործակցության համար ա**յս շրջանակը կարող է օգտագործվել միջսեկտորալ համագործակցության շրջանակներում՝ երիտասարդական քաղաքականության մշակման, նախագծերի պլանավորման և գնահատման գործընթացներում: Այն կօգնի համայնքներին, պետական մարմիններին և այլ կազմակերպություններին հասկանալ երիտասարդական աշխատողների դերը և ներգրավել նրանց արդյունավետորեն: Օրինակ՝ կարելի է օգտագործել շրջանակը տարբեր շահառուների միջև երկխոսություններում՝ գնահատելու համատեղ նախագծերի ազդեցությունը երիտասարդների զարգացման վրա, և մշակել հետադարձ կապի մեխանիզմներ՝ բարելավումներ առաջարկելու համար:

17. **Գիտահետազոտական և զարգացման նպատակներով** շրջանակը կարող է ծառայել որպես հիմք երիտասարդական աշխատանքի ոլորտի հետազոտությունների

համար՝ օգնելով բացահայտել միտումներ, կարիքներ և լավագույն պրակտիկաներ: Հետազոտողները կարող են օգտագործել այն տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացում: Օրինակ՝ կարելի է անցկացնել հարցումներ երիտասարդական աշխատողների շրջանում՝ գնահատելով կարողությունների մակարդակները, բացահայտելով առկա բացերը և առաջարկելով բարելավումներ:

18. Սույն կարողունակությունների շրջանակը սահմանվում է որպես երիտասարդական աշխատողների համար ընդհանուր կիրառելի կարողունակությունների շրջանակ: Շրջանակը կարող է համապատասխանեցվել հատուկ թիրախային խմբերի հետ աշխատող երիտասարդական աշխատողների առանձնահատկություններին, ներառյալ՝

1) պատերազմական կամ հետպատերազմյան իրավիճակներում աշխատող երիտասարդական աշխատողները,

2) սփյուռքահայերի և հայրենադարձների հետ աշխատող երիտասարդական աշխատողները,

3) հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող երիտասարդական աշխատողները,

4) այլ հատուկ խմբերի հետ աշխատող երիտասարդական աշխատողները:

19. Սույն շրջանակը կարող է լրացվել ոլորտային կամ գործառութային հատուկ կարողությունների շրջանակներով, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող երիտասարդական աշխատողների համար նախատեսված շրջանակներով:

III. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

20. Երիտասարդական աշխատողի հավաստագրումը գործընթաց է, որի նպատակն է գնահատել և պաշտոնապես ճանաչել երիտասարդական աշխատողի մասնագիտական կարողունակությունները՝ սույն կարողունակությունների շրջանակի պահանջներին համապատասխան:

21. Հավաստագրումը հիմք է երիտասարդական աշխատողի մասնագիտական կարգավիճակի հաստատման, զբաղվածության, կարիերային առաջխաղացման և որակի ապահովման համար:

22. Երիտասարդական աշխատողների հավաստագրումն իրականացնում է լիազոր մարմինը:

23. Լիազոր մարմինը երիտասարդական աշխատողի հավաստագրման գործընթացը կազմակերպելու նպատակով Նախարարի հրամանով ձևավորվում է հանձնաժողով:

24. Հանձնաժողովի կազմը բաղկացած է առնվազն 5 անդամներից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք նշանակվում են հանձնաժողովի կազմավորման մասին հրամանով՝ անժամկետ: Հանձնաժողովի անդամները կարող են փոփոխվել նախարարի հրամանով: Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն: Հանձնաժողովի անդամները ներառվում են հետևյալ համամասնությամբ՝ երեք ներկայացուցիչ պետական լիազոր մարմնից, ընդ որում՝

լիազոր մարմնի ներկայացուցիչներից մեկը հանդիսանում է նաև հանձնաժողովի քարտուղարը, երկու ներկայացուցիչ՝ երիտասարդության ոլորտի փորձագետներից:

25. Հանձնաժողովի՝

1) գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով,

2) հանձնաժողովի նիստերը իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի առկայության դեպքում,

3) որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է,

4) նիստերը արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը,

5) հանձնաժողովը առաջին նիստում որոշում է գնահատման գործընթացի մեկնարկի և ավարտի ժամկետները,

6) ապահովում է հավաստագրման համար դիմած մասնակիցների սահմանված պահանջներին համապատասխանության գնահատումը

26. Քարտուղարը՝

1) հանձնաժողովին է ներկայացնում նրա կողմից հաստատման ենթակա փաստաթղթերի նախագծերը.

2) հանձնաժողովի անդամներին և մասնակիցներին լիազոր մարմնի անունից՝ կից գրությամբ ուղարկում (տրամադրում) է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը՝ այդպիսի պահանջ ստանալու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

3) համապատասխան փաստաթղթեր կազմելով՝ գրառում է հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը.

4) իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:

27. Հանձնաժողովի առաջին նիստը գումարվում է հանձնաժողովի կազմավորման մասին հրամանով սահմանված օրը, վայրում և ժամին, որում՝

1) հաստատվում է հանձնաժողովի առաջին նիստի օրակարգը.

2) հաստատվում է հավաստագրման գործընթացի մեկնարկի մասին հայտարարության տեքստը, ընդ որում հայտարարությունը տարածելու ժամկետը չի կարող պակաս լինել 2 ամսից, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնաժողովը որոշում է այլ ժամկետներ,

3) հաստատում է հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

28. Հավաստագրման գործընթացը մեկնարկում է Լիազոր մարմնի մասնագիտական ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկի հիման վրա առնվազն տարին մեկ անգամ:

29. Հանձնաժողովի կողմից հավաստագրման գործընթացը մեկնարկելու օրվան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է հայտարարության հրապարակումը Լիազոր մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

30. Գնահատումը իրականացվում է երկու փուլով՝ փաստաթղթերի համապատասխանության ստուգում և գիտելիքների ստուգում թեստավորման միջոցով:

31. Հանձնաժողովը սահմանված ժամկետում ստուգում է հավաստագրման համար դիմած մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հավելվածով սահմանված պահանջներին,

32. Պահանջներին չհամապատասխանելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ներկայացնում է դիմած մասնակցին, որի վերաբերյալ մասնակիցը կարող է հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի նախագահին գրավոր ներկայացնել առարկություն:

33. Աառարկություն ստանալու դեպքում Հանձնաժողովը առնվազն երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է մասնակցի դիմումը, որի արդյունքում տրամադրում է գրավոր պարզաբանում:

34. Համապատասխանելու դեպքում մասնակիցը անցնում է գիտելիքի ստուգման փուլ, որ ժամանակ գրավոր թեստավորման արդյունքների հիման վրա գնահատվում է մասնակցի համապատասխանությունը սույն հավելվածով սահմանված պահանջներին: Ընդ որում թեստավորումը համարվում է հաջողությամբ հաղթահարված, եթե մասնակիցը ճիշտ է պատասխանել հարցաշարի հարցերի առնվազն ութսուն տոկոսին: Հանձնաժողովը ամփոփիչ նիստում թեստավորման արդյունքների հիման վրա.

1) հաստատում է այն մասնակիցների ցանկը, ովքեր համապատասխանում են սույն հավելվածով սահմանված պահանջներին և կարող են ստանալ լիազոր մարմնի ղեկավարի ստորագրությամբ հաստատված հավաստագիր,

2) մերժում է հավաստագրումը՝ հիմնավորված եզրակացությամբ և հաստատում է այն մասնակիցների ցանկը, ովքեր սույն հավաստագրման գործընթացի արդյունքում չեն կարող ստանալ հավաստագիր:

35. Սույն հավելվածի 37-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում՝ փաստաթղթերի համապատասխանությունը հիմք է հանդիսանում լիազոր մարմնի ղեկավարի ստորագրությամբ հաստատված հավաստագիր ստանալու համար:

36. Լիազոր մարմնի ղեկավարի ստորագրությամբ հաստատված հավաստագիր չստացող մասնակիցների ցանկում ընդգրկվելը չի կարող խոչնդոտել երկրորդ անգամ հավաստագրման գործընթացին մասնակցելու համար:

37. Հավաստագրման համար դիմելու իրավունք ունեն անձինք, որոնք՝

1) ունեն առնվազն միջին մասնագիտական կրթությունը հավաստող փաստաթուղթ, լիազոր մարմնի կողմից երաշխավորված կազմակերպություններում «Երիտասարդական աշխատողի վերապատրաստման» դասընթացին մասնակցությունը

հավաստող վկայական՝ ներառյալ ընթացիկ տարվա իրականացված ինքնագնահատումը հավաստող փաստաթուղթը, կամ

2) ունեն առնվազն միջին մասնագիտական կրթությունը հավաստող փաստաթուղթ, լիազոր մարմնի կողմից իրականացրած «Երիտասարդական աշխատողի վերապատրաստման» դասընթացին մասնակցությունը հավաստող վկայական, երիտասարդական աշխատանքի առնվազն 200 ժամ փաստագրված փորձ և երիտասարդական աշխատողի կարողունակությունների շրջանակի հիման վրա ընթացիկ տարվա ընթացքում իրականացված ինքնագնահատումը հավաստող փաստաթուղթ, կամ

3) ունեն առնվազն միջին մասնագիտական կրթությունը հավաստող փաստաթուղթ, երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և երիտասարդական աշխատողի գործառույթներով սահմանված երիտասարդական աշխատանքի առնվազն 500 ժամ փաստագրված փորձ և երիտասարդական աշխատողի կարողունակությունների շրջանակի հիման վրա ընթացիկ տարվա ընթացքում իրականացված ինքնագնահատումը հավաստող փաստաթուղթ,

4) ներկայացրել են փաստաթղթերի ամբողջական փաթեթը՝ լիազոր մարմնի սահմանած կարգով:

38. Երիտասարդական աշխատողի հավաստագրի գործողության ժամկետը սահմանվում է հինգ տարի:

39. Հավաստագրի երկարաձգումը իրականացվում է շարունակական մասնագիտական զարգացման վերապատրաստման վկայականի հիման վրա՝ Լիազոր մարմնի կողմից սահմանած կարգով:

40. Մասնակիցը հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի Լիազոր մարմնի ղեկավարին բողոքարկել հավաստագրման հանձնաժողովի որոշումը:

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

1) ՉԱՓԱՆԻՇ 1. ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Չափանիշը սահմանում է երիտասարդական աշխատողի մասնագիտական զարգացման հիմքերը՝ կարևորելով շարունակական ինքնազարգացումը և երիտասարդական աշխատանքի հիմնարար սկզբունքների ու մոտեցումների ընկալումը: Այն ընդգծում է ռեֆլեքսիվ պրակտիկայի, մասնագիտական էթիկայի և արժեքային համակարգերի նշանակությունը, ինչպես նաև ինքնահոգածության կարևորությունը՝ սթրեսի կառավարման և մասնագիտական այրվածության կանխարգելման միջոցով գործունեության կայունությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ինքնագիտակցություն և մասնագիտական ինքնարտացոլում

Կարողություն 1. Կարող է ընկալել երիտասարդական աշխատանքի գաղափարական և մեթոդաբանական հիմքերը և կողմնորոշվել դրա հետ կապված հասկացությունների, տեսակների և ձևաչափերի շրջանակում:

Կարողություն 2. Կարող է կիրառել ռեֆլեքսիվ (մտորումների վրա հիմնված) և գնահատող պրակտիկա սեփական անձի և աշխատանքի նկատմամբ:

Կարողություն 3. Կարող է կատարել սեփական մասնագիտական կարողունակությունների գնահատում և նախագծել դրանց զարգացման գործընթացներ և անհատական զարգացման պլան:

Կարողություն 4. Կարող է ապահովել շարունակական անձնական ինքնագիտակցություն, ինքնազարգացում և ինքնակատարելագործում:

մասնագիտական էթիկայի պահպանում

Կարողություն 5. Կարող է պահպանել մասնագիտական էթիկան, սահմանները և ինքնակարգավորումը:

Կարողություն 6. Կարող է կառուցել և պահպանել հստակ արժեքային համակարգ, ինչպես նաև աշխատել տարբերվող արժեքային համակարգերի հետ:

մասնագիտական բարեկեցության ապահովում

Կարողություն 7. Կարող է կառավարել սթրեսը, հուզական բեռը և կանխել մասնագիտական այրվածությունը:

2) ՉԱՓԱՆԻՇ 2. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Այս չափանիշը ընդգրկում է երիտասարդների հետ անմիջական փոխգործակցության ոլորտը՝ հիմնված վստահելի հարաբերությունների, անվտանգ միջավայրի և ներառականության վրա: Այն ներառում է ինչպես անհատական աջակցություն (մենթորություն, քոուչինգ), այնպես էլ մասնակցային մեթոդներով կրթական ծրագրերի իրականացում: Բաժինը նաև անդրադառնում է արժեքահեն կրթությանը, թվային գրագիտությանը, առողջ ապրելակերպի խթանմանը և միջմշակութային կարողունակությունների զարգացմանը:

Երիտասարդների հետ վստահելի հարաբերությունների կառուցում

Կարողություն 8. Կարող է կառուցել դրական, չդատապարտող և վստահելի հարաբերություններ երիտասարդների հետ և ընկալել նրանց որպես հավասար:

Կարողություն 9. Կարող է ապահովել ֆիզիկապես և հոգեբանորեն անվտանգ, աջակցող և ներառական միջավայր և խթանել բազմազանությունը:

Կարողություն 10. Կարող է իրականացնել արդյունավետ միջսերնդային երկխոսության աշխատանքներ և օգնել երիտասարդներին արժևորելու միջսերնդային արդյունավետ երկխոսության և համագործակցության արժեքը:

Անհատական աշխատանք և աջակցություն

Կարողություն 11. Կարող է իրականացնել անհատական աշխատանք երիտասարդների հետ՝ մենթորություն, քոուչինգ և խորհրդատվություն, ներառյալ անձնային և հուզական խնդիրների քննարկումը:

Կարողություն 12. Կարող է աջակցել երիտասարդներին իրենց անձնական, սոցիալական և արժեքային զարգացման գործում, բացահայտել և զարգացնել երիտասարդների տաղանդները, ներուժը և ինքնավստահությունը:

Կրթական գործընթացներ և զարգացում

Կարողություն 13. Կարող է նախագծել, իրականացնել և գնահատել որակյալ կրթական ծրագրեր և նախաձեռնություններ:

Կարողություն 14. Կարող է կիրառել մասնակցային և փորձառական ուսուցման մեթոդներ:

Կարողություն 15. Կարող է զարգացնել երիտասարդների մտածելու և գիտակցելու կարողությունները (ընկալում, վերլուծություն, քննադատություն, համադրում, սինթեզ, եզրահանգումներ):

Կարողություն 16. Կարող է զարգացնել երիտասարդների մոտ սոցիալական, քաղաքական և աշխարհաքաղաքական համակարգերի աշխատանքի սկզբունքների հասկացությունը և երևույթների օբյեկտիվ գնահատման կարողությունները:

Արժեքներ, դիրքորոշումներ և ինքնություն

Կարողություն 17. Կարող է ինտեգրել արժեքահեն կրթությունը և աշխատել մշակութային, հոգևոր և ազգային չափումների հետ երիտասարդական աշխատանքում:

Կարողություն 18 Կարող է նախաձեռնել և իրականացնել ծրագրեր, որոնք նպաստում են երիտասարդների հայրենաճանաչությանը, հայրենասիրությանը և հայրենիքի նկատմամբ տիրոջ վերաբերմունքի ձևավորմանը:

Կարողություն 19. Կարող է աշխատել նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության հետ և փոխանցել դրա պահպանման և զարգացման կարևորության գիտակցումը:

Կարողություն 20. Կարող է աջակցել երիտասարդների մշակութային ինքնության գիտակցմանը:

Թվային գործիքներ և արհեստական բանականություն

Կարողություն 21. Կարող է ինտեգրել թվային գիտելիքները, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները երիտասարդական աշխատանքի պրակտիկայում:

Կարողություն 22. Կարող է արդյունավետ կերպով կիրառել արհեստական բանականության գործիքները երիտասարդական աշխատանքում և աջակցել երիտասարդներին դրանց կիրառման գործընթացում:

Կարողություն 23. Կարող է աջակցել երիտասարդներին ճիշտ կողմնորոշվել արհեստական բանականության զարգացման հետ կապված սոցիալական, տնտեսական և այլ դաշտերում առաջացող փոփոխությունների համատեքստում:

Կարողություն 24. Կարող է ապահովել տեղեկատվական անվտանգությունը և խթանել անվտանգ ու պատասխանատու թվային վարքագիծը երիտասարդական աշխատանքում:

Առողջ ապրելակերպ և երիտասարդների առողջություն

Կարողություն 25. Կարող է արժևորել և խթանել առողջությունը և առողջ ապրելակերպը, որպես ռիսկային վարքագծի և վնասակար սովորությունների կանխարգելման հիմք:

Կարողություն 26. Կարող է զարգացնել առողջապահական գրագիտությունը՝ աջակցելով երիտասարդներին իրացնել իրենց առողջության իրավունքը և օգտվել հասանելի բժշկական ծառայություններից:

Ձեռնարկատիրություն և մասնագիտական կողմնորոշում

Կարողություն 27. Կարող է զարգացնել երիտասարդների նախաձեռնողականությունը և ձեռնարկատիրական մտածելակերպը:

Կարողություն 28. Կարող է երիտասարդների մոտ զարգացնել ձեռնարկատիրական և սոցիալ ձեռնարկատիրական ունակություններ:

Կարողություն 29. Կարող է աջակցել երիտասարդներին իրենց մասնագիտական կողմնորոշման և կարիերայի զարգացման ոլորտներում:

Միջմշակութային կարողունակություններ

Կարողություն 30. Կարող է զարգացնել երիտասարդների միջմշակութային զգայունության և հաղորդակցության կարողությունները:

Կարողություն 31. Կարող է աջակցել երիտասարդների՝ հակամարտությունների կառուցողական կառավարման և խաղաղ կարգավորման մեջ արդյունավետ ներգրավման կարողությունների զարգացմանը:

Կարողություն 32. Կարող է աջակցել համայնքի, պետության և գլոբալ մակարդակներում առկա միջմշակութային խնդիրների գիտակցմանը և դրանց լուծման վերաբերյալ պատասխանատվության ձևավորմանը:

3) ՉԱՓՈՐՈՇԻՉ 3, ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Չափորոշիչը վերաբերում է երիտասարդական աշխատանքի կառուցվածքային և ռազմավարական կազմակերպմանը՝ սկսած կարիքների գնահատումից մինչև ծրագրերի մշակում, իրականացում և ազդեցության գնահատում: Այն շեշտադրում է ռեսուրսների (ֆինանսական, մարդկային) արդյունավետ կառավարումը և ռիսկերի կանխարգելումը: Կարևորվում է նաև թիմային աշխատանքի արդյունավետությունը, կոլեկտիվ ուսուցումը և երիտասարդների ներգրավումը կազմակերպչական որոշումների կայացման գործընթացներում:

Ծրագրային աշխատանք

Կարողություն 33. Կարող է իրականացնել կարիքների գնահատում և բացահայտել երիտասարդների իրական խնդիրները, մարտահրավերներն ու առաջնայնությունները:

Կարողություն 34. Կարող է մշակել փոփոխության տեսություն և նախագծել դրա վրա հիմնված արդյունավետ միջամտություններ:

Կարողություն 35. Կարող է խթանել նորարարությունը և ստեղծարարությունը երիտասարդական ծրագրերի և նախաձեռնությունների մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում:

Կարողություն 36. Կարող է պլանավորել, իրականացնել և մշտադիտարկել ծրագրերը և նախագծերը և ապահովել երիտասարդների արդյունավետ մասնակցությունը բոլոր այդ փուլերում, և օգտագործել գնահատման արդյունքները սեփական աշխատանքի բարելավման համար:

Կարողություն 37. Կարող է պլանավորել, չափել և ներկայացնել ծրագրերի և նախագծերի սոցիալական ազդեցությունը և երիտասարդական աշխատանքի արդյունքները:

Կարողություն 38. Կարող է կազմել ծրագրի տեսանելիության և հանրային հարաբերությունների արդյունավետ կազմակերպման պլան, իրականացնել դա և գնահատել արդյունավետությունը:

Կարողություն 39. Կարող է իրականացնել ռիսկերի գնահատման և կանխարգելման աշխատանքներ և պահպանել աշխատանքի արդյունավետությունը ճգնաժամային և հատուկ իրավիճակներում:

Ռեսուրսների կառավարում

Կարողություն 40. Կարող է մոբիլիզացնել ռեսուրսներ՝ ներառյալ դրամաշնորհներ, սոցիալական ձեռնարկատիրություն, կորպորատիվ սոցիալական

պատասխանատվություն, հավաքական և այլընտրանքային ֆինանսավորման գործիքներ:

Կարողություն 41 Կարող է իրականացնել բյուջեի, ֆինանսական և նյութական ռեսուրսների արդյունավետ կառավարում:

Կարողություն 42. Կարող է արդյունավետ կերպով կառավարել մարդկային ռեսուրսները:

Կարողություն 43. Կարող է քարտեզագրել համայնքային, ազգային և միջազգային մակարդակներում երիտասարդների համար առկա աջակցության մեխանիզմները և ռեսուրսները և դրանք հասանելի դարձնել երիտասարդների համար:

Թիմային աշխատանք և կազմակերպություն

Կարողություն 44. Կարող է հասկանալ թիմային աշխատանքի սկզբունքները, ոճերը և թիմում անդամների դերերը և աշխատել թիմային դինամիկայի հետ:

Կարողություն 45. Կարող է արդյունավետորեն համագործակցել թիմի ներսում, տալ և ստանալ հետադարձ կապ և ապահովել կոլեկտիվ ուսուցում:

Կարողություն 46. Կարող է կազմակերպել արդյունավետ կոլեկտիվ մտագործունեության գործընթացներ՝ կիրառելով տարբեր տեխնիկաներ և մեթոդական լուծումներ:

Կարողություն 47. Կարող է արդյունավետ կերպով աշխատել երիտասարդական կազմակերպությունում կամ երիտասարդների հետ աշխատանքի այլ կառույցում և նպաստել դրա զարգացմանը:

Կարողություն 48. Կարող է ներգրավել երիտասարդներին կազմակերպության ներքին ռազմավարությունների, աշխատակարգերի և կանոնակարգերի մշակման, իրագործման և գնահատման գործընթացում:

4) ՉԱՓՈՐՈՇԻՉ 4. ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Չափորոշիչը ընդգրկում է երիտասարդական աշխատանքը ավելի լայն հասարակական համատեքստում՝ խրախուսելով համագործակցությունը համայնքների, շահակիցների և պետական մարմինների հետ: Այն ուղղված է երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցության խթանմանը, ինչպես նաև միջոլորտային համագործակցության զարգացմանը: Ընդգրկում է նաև հետազոտական բաղադրիչը և աշխատանքը գլոբալ ու միջազգային մարտահրավերների համատեքստում:

Համայնք և շահակիցներ

Կարողություն 49. Կարող է համագործակցել համայնքի հետ և ապահովել համայնքային մասնակցությունը երիտասարդական աշխատանքի գործընթացներում:

Կարողություն 50. Կարող է համագործակցել արտաքին շահակիցների և գործընկեր կազմակերպությունների հետ:

Կարողություն 51. Կարող է կողմնորոշվել Հայաստանի տարբեր աշխարհագրական և սոցիալական համայնքերի դաշտում, կազմակերպել միջհամայնքային ծրագրեր և նպաստել քաղաքային և գյուղական համայնքների ներդաշնակ զարգացմանը:

Կարողություն 52. Կարող է կազմակերպել արդյունավետ աշխատանք հայկական սփյուռքի տարբեր համայնքերի և համայնքային կառույցների հետ:

Կարողություն 53. Կարող է արդյունավետորեն հաղորդակցվել տարբեր լսարանների հետ և պատրաստել համապատասխան նյութեր, հաշվետվություններ և ներկայացումներ:

Կարողություն 54. Կարող է ակտիվորեն մասնակցել երիտասարդական աշխատողների մասնագիտական համայնքի աշխատանքներին և սովորել ազգային ու միջազգային լավագույն փորձից:

Քաղաքացիական և քաղաքական մասնակցություն

Կարողություն 55. Կարող է օգնել երիտասարդներին գիտակցել իրենց դերն ու պատասխանատվությունը համայնքում, սահմանել փոփոխությունների իրատեսական նպատակներ, ինչպես նաև կազմակերպել անհատական և խմբային գործողություններ:

Կարողություն 56. Կարող է խթանել երիտասարդների քաղաքացիական, քաղաքական մասնակցությունը և ակտիվ քաղաքացիության զարգացմունը:

Կարողություն 57. Կարող է աջակցել երիտասարդների մասնակցությանը տեղական և պետական երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում:

Միջոլորտային համագործակցություն

Կարողություն 58. Կարող է աշխատել միջոլորտային և միջգերատեսչական համագործակցության շրջանակներում՝ ապահովելով ոլորտների, պետական մարմինների և հասարակական/մասնավոր գործընկերների ներգրավվածությունը ընդհանուր նպատակների իրականացման համար:

Կարողություն 59. Կարող է ինտեգրել երիտասարդական աշխատանքը այլ ոլորտների և համակարգերի հետ:

Հետազոտություն և զարգացում

Կարողություն 60. Կարող է իրականացնել հետազոտություններ, կիրառել հետազոտական մեթոդներ, իրականացնել վերլուծական աշխատանքներ և կիրառել փաստահեն և տվյալահեն մոտեցումներ:

Կարողություն 61. Կարող է հետևել ոլորտի զարգացման միտումներին և ինտեգրել նոր գիտելիքները պրակտիկայում:

Միջազգային և գլոբալ չափումներ

Կարողություն 62. Կարող է աշխատել միջազգային համատեքստում և կառավարել միջազգային կամ տարածաշրջանային միջմշակութային ծրագրեր:

Կարողություն 63. Կարող է հասկանալ գլոբալ իրավիճակը, կայուն զարգացման օրակարգը և արձագանքել գլոբալ մարտահրավերներին:

Կարողություն 64. Կարող է արդյունավետ աշխատել արագ փոփոխվող սոցիալական, տեխնոլոգիական և քաղաքական համատեքստերում, ինչպես նաև մասնակցել ապագայի հետ կապված ռազմավարական նախագծերի և նախաձեռնությունների մշակմանը:

Ձև 2

ՕՐԻՆԵԿԵԼԻ ՁԵՎ

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻ

Երիտասարդական աշխատողի ինքնագնահատման սույն գործիքը նախատեսված է երիտասարդական աշխատանք իրականացնող յուրաքանչյուր անձի համար՝ անկախ կարգավիճակից (կամավոր/վարձատրվող) և գործունեության միջավայրից (պետական/համայնքային մարմիններ, երիտասարդական կազմակերպություններ, երիտասարդական կենտրոններ և այլն):

Գործիքը ստեղծվել է երիտասարդական աշխատողներին աջակցելու համար՝ հիմնվելով «Երիտասարդական աշխատողների կարողությունների շրջանակի» վրա և ընդգրկում է 4 գործառույթային ոլորտ՝

1) Անձնական և մասնագիտական զարգացում,

2) Երիտասարդների հետ ուղղակի աշխատանք,

3) Կազմակերպչական և ծրագրային կառավարում,

4) Աշխատանք համայնքի, հասարակության և աշխարհի հետ:

Գործիքը մասնագիտական աճ խթանելու միջոց է, որի արդյունավետությունը կախված է ազնիվ և քննադատական ռեֆլեկսիայից: Այն օգնում է տեսնել երիտասարդական աշխատողի ուժեղ կողմերը, բացահայտել կարիքները և պլանավորել զարգացման առաջնահերթությունները:

Ինքնագնահատումը պարտադիր է երիտասարդության ոլորտի համար պետական լիազոր մարմնի կողմից իրականացվող երիտասարդական աշխատողի հավաստագրմանը դիմելու համար: Հավաստագրման դիմելիս ինքնագնահատումը պետք է ամբողջությամբ իրականացված լինի դիմումին նախորդող 12 ամիսների ընթացքում՝ մենթորի կամ մասնագիտական ճանաչում ունեցող այլ զրուցակցի վավերացմամբ:

Լրացման կարգ

Կարելի է միանգամից լրացնել կարողունակությունների ամբողջ շրջանակը կամ կենտրոնանալ որոշակիորեն ընտրված առանձին ոլորտների վրա՝ ըստ մասնագիտական դերակատարման, փորձառության և զարգացման կարիքների:

Նախքան ինքնագնահատումը սկսելը, խորհուրդ է տրվում արագ վերանայել ամբողջ գործիքը՝ հասկանալու համար կարողունակությունների ընդգրկումն ու տրամաբանությունը:

Ցանկալի է գնալ բաժին առ բաժին (4 գործառույթներով) և յուրաքանչյուր կարողության դիմաց նշել գնահատականը աջ կողմի սյունակում: Յուրաքանչյուր գործառույթ ներառում է կոնկրետ կարողություններ, որոնց վերաբերյալ պետք է կատարել ինքնագնահատում չորս բալային սանդղակով՝ 1-4:

Խորհուրդ է տրվում աշխատել «վերջին 6-12 ամիսների» իրական փորձի հիման վրա (ոչ թե՝ ցանկալի պատկերի): Եթե ցանկություն կա բարձրացնել գնահատման որակը, նախապես կարելի է հավաքել աշխատանքի 2-5 «ապացույց» (օրինակ՝ իրականացրած ծրագրեր, մասնակցային հետադարձ կապ, իրականացրած սեսիաներ, երիտասարդների հետ աշխատանքի դեպքեր, գործընկերային գնահատական և այլն: Սա պարտադիր չէ, բայց նվազեցնում է սուբյեկտիվությունը):

Եթե գործիքը լրացվում է մենթորի կամ զրուցակցի աջակցությամբ, ճիշտ է նախ լրացնել ինքնուրույն, ապա քննարկել 5-10 առավել վիճարկելի գնահատականները և միայն դրանից հետո վերջնականացնել: Սա պահպանում է ինքնագնահատման իմաստը և միաժամանակ բարձրացնում է ճշգրտությունը:

Զարգացման պլանավորում.

Գործիքի վերջում նախատեսված են բաց հարցեր՝ ուժեղ կողմերի, թույլ կողմերի և հետագա քայլերի մասին: Խորհուրդ է տրվում դրանք լրացրել անմիջապես գնահատումից հետո՝ հենվելով նշված միավորների վրա:

Առաջարկվում է՝

- ✓ Ուժեղ կողմերից ընտրել 2-3-ը և գրել՝ ինչպես է դրանք ավելի համակարգված կիրառվելու/փոխանցվելու ուրիշներին:
- ✓ Թույլ կողմերից ընտրել 2-3-ը և գրել՝ ինչ կոնկրետ հմտություն/գիտելիք է պակասում, ինչ գործողություն է արվելու (վերապատրաստում, մենթորություն, պրակտիկ փորձ, գրականություն) և ինչ ժամկետներում:

Գնահատման սանդղակ.

Յուրաքանչյուր կարողության դիմաց նշել մեկ թիվ՝ 1, 2, 3 կամ 4: Սանդղակը կիրառվում է հետևյալ իմաստներով՝

1 -չունեմ այդ կարողությունը (կամ գործնականում դեռ չեմ ցուցադրել/չեմ կիրառել),

2 -ցածր է (կարող եմ սահմանափակ իրավիճակներում, հաճախ՝ ունեմ աջակցության կարիք),

3 -բավարար է (կայուն եմ կիրառում սովորական իրավիճակներում),

4 -գերազանց է (վստահ, կայուն և ինքնուրույն եմ կիրառում նաև բարդ իրավիճակներում, կարող եմ աջակցել/ուղղորդել ուրիշներին):

Նշում՝ եթե որևէ կարողություն ընթացիկ դերում գործնականում կիրառելու հնարավորություն պարզապես չի եղել, կամ դժվարություն է առաջացել գնահատականի ընտրության հարցում, ավելի ազնիվ է նշել 1 կամ 2 և դա արձանագրել վերջում՝ «Այլ նշումներ» բաժնում ու կենտրոնանալ զարգացման վրա, քան տեսականորեն բարձր գնահատել:

ԳՈՐԾԱՌՈՒՅԹ 1. ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	
ինքնագիտակցություն և մասնագիտական ինքնարտացոլում	
Կարողություն 1. Կարող է ընկալել երիտասարդական աշխատանքի գաղափարական և մեթոդաբանական հիմքերը և կողմնորոշվել դրա հետ կապված հասկացությունների, տեսակների և ձևաչափերի շրջանակում:	
Կարողություն 2. Կարող է կիրառել ռեֆլեքսիվ (մտորումների վրա հիմնված) և գնահատող պրակտիկա սեփական անձի և աշխատանքի նկատմամբ:	
Կարողություն 3. Կարող է կատարել սեփական մասնագիտական կարողունակությունների գնահատում և նախագծել դրանց զարգացման գործընթացներ և անհատական զարգացման պլան:	
Կարողություն 4. Կարող է ապահովել շարունակական անձնական ինքնագիտակցություն, ինքնազարգացում և ինքնակատարելագործում:	
մասնագիտական էթիկայի պահպանում	
Կարողություն 5. Կարող պահպանել մասնագիտական էթիկան, սահմանները և ինքնակարգավորումը:	
Կարողություն 6. Կարող է կառուցել և պահպանել հստակ արժեքային համակարգ, ինչպես նաև աշխատել տարբերվող արժեքային համակարգերի հետ:	
մասնագիտական բարեկեցության ապահովում	
Կարողություն 7. Կարող է կառավարել սթրեսը, հուզական բեռը և կանխել մասնագիտական այրվածությունը:	

ԳՈՐԾԱՌՈՒՅԹ 2. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՈՒՂՂԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔ	
Երիտասարդների հետ վստահելի հարաբերությունների կառուցում	
Կարողություն 8. Կարող է կառուցել դրական, չդատապարտող և վստահելի հարաբերություններ երիտասարդների հետ և ընկալել նրանց որպես հավասար:	
Կարողություն 9. Կարող է ապահովել ֆիզիկապես և հոգեբանորեն անվտանգ, աջակցող և ներառական միջավայր և խթանել բազմազանությունը:	
Կարողություն 10. Կարող է իրականացնել արդյունավետ միջսերնդային երկխոսության աշխատանքներ և օգնել երիտասարդներին արժևորելու միջսերնդային արդյունավետ երկխոսության և համագործակցության արժեքը:	
Անհատական աշխատանք և աջակցություն	

Կարողություն 11. Կարող է իրականացնել անհատական աշխատանք երիտասարդների հետ՝ մենթորություն, քոուչինգ և խորհրդատվություն, ներառյալ անձնային և հուզական խնդիրների քննարկումը:	
Կարողություն 12. Կարող է աջակցել երիտասարդներին իրենց անձնական, սոցիալական և արժեքային զարգացման գործում, բացահայտել և զարգացնել երիտասարդների տաղանդները, ներուժը և ինքնավստահությունը:	
Կրթական գործընթացներ և զարգացում	
Կարողություն 13. Կարող է նախագծել, իրականացնել և գնահատել որակյալ կրթական ծրագրեր և նախաձեռնություններ:	
Կարողություն 14. Կարող է կիրառել մասնակցային և փորձառական ուսուցման մեթոդներ:	
Կարողություն 15. Կարող է զարգացնել երիտասարդների մտածելու և գիտակցելու կարողությունները (ընկալում, վերլուծություն, քննադատություն, համադրում, սինթեզ, եզրահանգումներ):	
Կարողություն 16. Կարող է զարգացնել երիտասարդների մոտ սոցիալական, քաղաքական և աշխարհաքաղաքական համակարգերի աշխատանքի սկզբունքների հասկացությունը և երևույթների օբյեկտիվ գնահատման կարողությունները:	
Արժեքներ, դիրքորոշումներ և ինքնություն	
Կարողություն 17. Կարող է ինտեգրել արժեքահեն կրթությունը և աշխատել մշակութային, հոգևոր և ազգային չափումների հետ երիտասարդական աշխատանքում:	
Կարողություն 18 Կարող է նախաձեռնել և իրականացնել ծրագրեր, որոնք նպաստում են երիտասարդների հայրենաճանաչությանը, հայրենասիրությանը և հայրենիքի նկատմամբ տիրոջ վերաբերմունքի ձևավորմանը:	
Կարողություն 19. Կարող է աշխատել նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության հետ և փոխանցել դրա պահպանման և զարգացման կարևորության գիտակցումը:	
Կարողություն 20. Կարող է աջակցել երիտասարդների մշակութային ինքնության գիտակցմանը:	
Թվային գործիքներ և արհեստական բանականություն	
Կարողություն 21. Կարող է ինտեգրել թվային գիտելիքները, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները երիտասարդական աշխատանքի պրակտիկայում:	
Կարողություն 22. Կարող է արդյունավետ կերպով կիրառել արհեստական բանականության գործիքները երիտասարդական աշխատանքում և աջակցել երիտասարդներին դրանց կիրառման գործընթացում:	

Կարողություն 23. Կարող է աջակցել երիտասարդներին ճիշտ կողմնորոշվել արհեստական բանականության զարգացման հետ կապված սոցիալական, տնտեսական և այլ դաշտերում առաջացող փոփոխությունների համատեքստում:	
Կարողություն 24. Կարող է ապահովել տեղեկատվական անվտանգությունը և խթանել անվտանգ ու պատասխանատու թվային վարքագիծը երիտասարդական աշխատանքում:	
Առողջ ապրելակերպ և երիտասարդների առողջություն	
Կարողություն 25. Կարող է արժևորել և խթանել առողջությունը և առողջ ապրելակերպը, որպես ռիսկային վարքագծի և վնասակար սովորությունների կանխարգելման հիմք:	
Կարողություն 26. Կարող է զարգացնել առողջապահական գրագիտությունը՝ աջակցելով երիտասարդներին իրացնել իրենց առողջության իրավունքը և օգտվել հասանելի բժշկական ծառայություններից:	
Ձեռնարկատիրություն և մասնագիտական կողմնորոշում	
Կարողություն 27. Կարող է զարգացնել երիտասարդների նախաձեռնողականությունը և ձեռնարկատիրական մտածելակերպը:	
Կարողություն 28. Կարող է երիտասարդների մոտ զարգացնել ձեռնարկատիրական և սոցիալ ձեռնարկատիրական ունակություններ:	
Կարողություն 29. Կարող է աջակցել երիտասարդներին իրենց մասնագիտական կողմնորոշման և կարիերայի զարգացման ոլորտներում:	
Միջմշակութային կարողություններ	
Կարողություն 30. Կարող է զարգացնել երիտասարդների միջմշակութային զգայունության և հաղորդակցության կարողունակությունները:	
Կարողություն 31. Կարող է աջակցել երիտասարդների՝ հակամարտությունների կառուցողական կառավարման և խաղաղ կարգավորման մեջ արդյունավետ ներգրավման կարողությունների զարգացմանը:	
Կարողություն 32. Կարող է աջակցել համայնքի, պետության և գլոբալ մակարդակներում առկա միջմշակութային խնդիրների գիտակցմանը և դրանց լուծման վերաբերյալ պատասխանատվության ձևավորմանը:	

ԳՈՐԾԱՌՈՒՅԹ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
Ծրագրային աշխատանք

Կարողություն 33. Կարող է իրականացնել կարիքների գնահատում և բացահայտել երիտասարդների իրական խնդիրները, մարտահրավերներն ու առաջնայնությունները:	
Կարողություն 34. Կարող է մշակել փոփոխության տեսություն և նախագծել դրա վրա հիմնված արդյունավետ միջամտություններ:	
Կարողություն 35. Կարող է խթանել նորարարությունը և ստեղծարարությունը երիտասարդական ծրագրերի և նախաձեռնությունների մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում:	
Կարողություն 36. Կարող է պլանավորել, իրականացնել և մշտադիտարկել ծրագրերը և նախագծերը և ապահովել երիտասարդների արդյունավետ մասնակցությունը բոլոր այդ փուլերում, և օգտագործել գնահատման արդյունքները սեփական աշխատանքի բարելավման համար:	
Կարողություն 37. Կարող է պլանավորել, չափել և ներկայացնել ծրագրերի և նախագծերի սոցիալական ազդեցությունը և երիտասարդական աշխատանքի արդյունքները:	
Կարողություն 38. Կարող է կազմել ծրագրի տեսանելիության և հանրային հարաբերությունների արդյունավետ կազմակերպման պլան, իրականացնել դա և գնահատել արդյունավետությունը:	
Կարողություն 39. Կարող է իրականացնել ռիսկերի գնահատման և կանխարգելման աշխատանքներ և պահպանել աշխատանքի արդյունավետությունը ճգնաժամային և հատուկ իրավիճակներում:	
Ռեսուրսների կառավարում	
Կարողություն 40. Կարող է մոբիլիզացնել ռեսուրսներ՝ ներառյալ դրամաշնորհներ, սոցիալական ձեռնարկատիրություն, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հավաքական և այլընտրանքային ֆինանսավորման գործիքներ:	
Կարողություն 41 Կարող է իրականացնել բյուջեի, ֆինանսական և նյութական ռեսուրսների արդյունավետ կառավարում:	
Կարողություն 42. Կարող է արդյունավետ կերպով կառավարել մարդկային ռեսուրսները:	
Կարողություն 43. Կարող է քարտեզագրել համայնքային, ազգային և միջազգային մակարդակներում երիտասարդների համար առկա աջակցության մեխանիզմները և ռեսուրսները և դրանք հասանելի դարձնել երիտասարդների համար:	
Թիմային աշխատանք և կազմակերպություն	
Կարողություն 44. Կարող է հասկանալ թիմային աշխատանքի սկզբունքները, ոճերը և թիմում անդամների դերերը և աշխատել թիմային դինամիկայի հետ:	

Կարողություն 45. Կարող է արդյունավետորեն համագործակցել թիմի ներսում, տալ և ստանալ հետադարձ կապ և ապահովել կոլեկտիվ ուսուցում:	
Կարողություն 46. Կարող է կազմակերպել արդյունավետ կոլեկտիվ մտագործունեության գործընթացներ՝ կիրառելով տարբեր տեխնիկաներ և մեթոդական լուծումներ:	
Կարողություն 47. Կարող է արդյունավետ կերպով աշխատել երիտասարդական կազմակերպությունում կամ երիտասարդների հետ աշխատանքի այլ կառույցում և նպաստել դրա զարգացմանը:	
Կարողություն 48. Կարող է ներգրավել երիտասարդներին կազմակերպության ներքին ռազմավարությունների, աշխատակարգերի և կանոնակարգերի մշակման, իրագործման և գնահատման գործընթացում:	

ԳՈՐԾԱՌՈՒՅԹ 4. ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ	
Համայնք և շահակիցներ	
Կարողություն 49. Կարող է համագործակցել համայնքի հետ և ապահովել համայնքային մասնակցությունը երիտասարդական աշխատանքի գործընթացներում:	
Կարողություն 50. Կարող է համագործակցել արտաքին շահակիցների և գործընկեր կազմակերպությունների հետ:	
Կարողություն 51. Կարող է կողմնորոշվել Հայաստանի տարբեր աշխարհագրական և սոցիալական համայնքերի դաշտում, կազմակերպել միջհամայնքային ծրագրեր և նպաստել քաղաքային և գյուղական համայնքների ներդաշնակ զարգացմանը:	
Կարողություն 52. Կարող է կազմակերպել արդյունավետ հաղորդակցություն հայկական սփյուռքի տարբեր համայնքերի և համայնքային կառույցների հետ:	
Կարողություն 53. Կարող է արդյունավետորեն հաղորդակցվել տարբեր լսարանների հետ և պատրաստել համապատասխան նյութեր, հաշվետվություններ և ներկայացումներ:	
Կարողություն 54. Կարող է ակտիվորեն մասնակցել երիտասարդական աշխատողների մասնագիտական համայնքի աշխատանքներին և սովորել ազգային ու միջազգային լավագույն փորձից:	
Քաղաքացիական և քաղաքական մասնակցություն	
Կարողություն 55. Կարող է օգնել երիտասարդներին գիտակցել իրենց դերն ու պատասխանատվությունը համայնքում, սահմանել փոփոխությունների իրատեսական նպատակներ, ինչպես նաև կազմակերպել անհատական և խմբային գործողություններ:	

Կարողություն 56. Կարող է խթանել երիտասարդների քաղաքացիական, քաղաքական մասնակցությանը և ակտիվ քաղաքացիության զարգացմանը:	
Կարողություն 57. Կարող է աջակցել երիտասարդների մասնակցությանը տեղական և պետական երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում:	
Միջսեկտորալ համագործակցություն	
Կարողություն 58. Կարող է աշխատել միջոլորտային, միջգերատեսչական և միջսեկտորալ համագործակցության շրջանակներում՝ ապահովելով ոլորտների, պետական մարմինների և հասարակական/մասնավոր գործընկերների ներգրավվածությունը ընդհանուր նպատակների իրականացման համար:	
Կարողություն 59. Կարող է ինտեգրել երիտասարդական աշխատանքը այլ ոլորտների և համակարգերի հետ:	
Հետազոտություն և զարգացում	
Կարողություն 60. Կարող է իրականացնել հետազոտություններ, կիրառել հետազոտական մեթոդներ, իրականացնել վերլուծական աշխատանքներ և կիրառել փաստահեն և տվյալահեն մոտեցումներ:	
Կարողություն 61. Ունակ է հետևել ոլորտի զարգացման միտումներին և ինտեգրել նոր գիտելիքները պրակտիկայում:	
Միջազգային և գլոբալ չափումներ	
Կարողություն 62. Ունակ է աշխատել միջազգային համատեքստում և կառավարել միջազգային և միջմշակութային ծրագրեր:	
Կարողություն 63. Ունակ է հասկանալ գլոբալ իրավիճակը, կայուն զարգացման օրակարգը և արձագանքել գլոբալ մարտահրավերներին:	
Կարողություն 64. Ունակ է արդյունավետ աշխատել արագ փոփոխվող սոցիալական, տեխնոլոգիական և քաղաքական համատեքստերում, ինչպես նաև մասնակցել ապագայի հետ կապված ռազմավարական նախագծերի և նախաձեռնությունների մշակմանը	